ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 19 >> Նոյեմբերի 2014թ. N: 125 ք.Գյումրի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի պետական բյուջեում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N1414-Ն որոշման մեջ փոփոխություններ, լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրները բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով լուծելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին գումար հատկացնելու մասին» N1151-Ն որոշման 10-րդ կետի բ) ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի <<Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեներով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի մասին>> N309-Ն որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի ե) ենթակետի և 29-րդ կետի դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի շրջանակում վկայագրի միջոցով գնվող բնակարանի (բնակելի տան) ընտրված տարբերակը մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբի ղեկավար Տիգրան Հարությունյանին՝ վկայագիր ստացած անձի կողմից սահմանված ժամկետում ձեռք բերվող բնակարանի (բնակելի տան) ընտրված տարբերակի վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզպետին ուղղված դիմումները ստանալուց հետո աշխատանքային խմբի կողմից 3-օրյա ժամկետում կատարված ուսումնասիրությունների հիման վրա կազմել վկայագրի միջոցով գնվող բնակարանի (բնակելի տան) ընտրված տարբերակը մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու մասին եզրակացություններ:

3. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել ինձ :

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

ՀՀ Շիրակի մարզպետի

2014թ. Հոկտեմբերի «19» N 125

կարգադրության

ԿԱԶՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Տիգրան Հարությունյան	-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ, խմբի ղեկավար,
Անդամներ՝	
Աշոտ Հախվերդյան	-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի գլխավոր մասնագետ,
Սարգիս Մելոյան	-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության առաջատար մասնագետ,
Մկրտիչ Ասատրյան	-ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ,
Ստյոպա Սահակյան	-ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի պետական տեսուչ ,

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ